ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «29» ապրիլի 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 137-Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի ապրիլի 23-ի N 574-Ա/2 հրամանով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ – ԻՀ ԱՀԽ – 2024» միջազգային մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ)՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչությանը (պետ՝ Ա.Վիրաբյան)՝

ա) ապահովել Մրցույթի հայտ ներկայացնողների համար խորհրդատվության տրամադրումը,

բ) կազմակերպել հայտերի թղթային տարբերակների ընդունումը,

գ) կազմակերպել Մրցույթի արդյունքում շահառու ճանաչված հայտատուների հետ պայմանագրերի կնքումը.

2) Կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Ա. Հակոբյան)՝

ա) ապահովել Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգով Մրցույթի մասնակցության հայտերի ընդունումը,

բ) ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

գ) ապահովել Մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը.

3) Կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Ա. Մելիք-Քարամյան)՝ ապահովել Մրցույթի արդյունքների տեղադրումը Կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում.

4) Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ. Գալստյան)՝ սահմանված կարգով ապահովել Մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ